ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 հուլիսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

90
(2940)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԸՆՏՐՈՎԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր եւ առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանը, համաձայն 2023 թվականի գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի՝ նախորդ տարեսկզբին հայտարարագրել է 4 անշարժ գույք՝ 3 հողամաս միանձնյա սեփականությամբ եւ մեկ անհատական բնակելի տուն՝ համատեղ սեփականությամբ:

Տարվա ընթացքում Թորոսյանի կողմից օտարվել է Արագածոտնի մարզի Փարպի գյուղում գտնվող 2 հողամաս, որոնք արժեցել են 7 մլն 800 հազար դրամ: Պատգամավորի վաճառած հողը գնել է ոմն Կրեկուար Պաննա Նաիմին, որը հայտնվել է 2021 թվականի հարկային տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած հարկ վճարողների ցանկում:

Տարեվերջին, որպես անշարժ գույք, Թորոսյանի հայտարարագրում մնացել է Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում գտնվող անհատական բնակելի տունը եւ 2020 թվականին ձեռք բերած Ծաղկաձոր քաղաքում գտնվող հողամասը:

ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել, սակայն, համաձայն ներկայացված տվյալների, շահագործում է սեփականության իրավունքով իրեն չպատկանող, 2015 թվականի արտադրության MERCEDES-BENZ մակնիշի մեքենա:

2010-2011 թվականներին Արսեն Թորոսյանը ՀՀ ԱՆ տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի մոնիթորինգի եւ գնահատման բաժնի վարիչ է եղել եւ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: 2011-2015 թվականներին եւ 2016-2018 թվականներին՝ «ՄԻԲՍ» բժշկական կենտրոնի տնօրեն: 2018-2021 թվականներին ՀՀ առողջապահության նախարար է եղել, իսկ 2021 թվականի հունվար-հուլիս ամիսներին՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար:

Թորոսյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 686 հազար դրամ, 1 355 եվրո եւ 88 դոլար, կանխիկ դրամական առկա միջոցները տարվա սկզբում կազմել են 12 մլն դրամ, սակայն դրանք տարեվերջին դարձել են 1 մլն դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները տարեվերջին կազմել են 34 մլն 017 հազար դրամ, որից 9 մլն 755 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից, 560 հազար դրամը եկամուտ է՝ ստացված հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից:

UniCredit Bank Austria AG միջազգային բանկից Թորոսյանը ստացել է 360 եվրո եւ նշել է դա որպես «այլ եկամուտ»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ն եւ Ս քոնսթրաքշն» եւ «Կաէռ քոնսթրաքշն» ՍՊԸ-ները Դավթաշեն թաղամասի Անաստաս Միկոյան 64 հասցեում բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ համալիր են կառուցում՝ պայմանական՝ «Դավթաշեն Սիթի» թաղամաս անվամբ, 6 մասնաշենքից բաղկացած: «Ժողովուրդ» օրաթերթն ահազանգեր է ստացել համալիրում տուն գնած քաղաքացիներից առ այն, որ կառուցապատողն իրենց տան վկայականները չի տալիս: «Ժողովուրդ» օրաթերթը հարցումով դիմեց Երեւանի քաղաքապետարան՝ հետաքրքրվելով, թե ինչու չի տրվում այդ շենքերի համար ավարտական փաստաթուղթը, որի հիման վրա կառուցապատողը կարողանա սեփականության վկայականներ ձեռք բերել: Ի պատասխան՝ ստացանք հետեւյալը. «Տեղեկացնում ենք, որ 05.06.2024 թվականին կառուցապատող «Ն եւ Ս քոնսթրաքշն» ՍՊԸ-ին (ոչ թե KR CONSTRUCTION) Միկոյան 64 հասցեի բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի համար տրվել է ավարտական ակտ»: Երբ է տրվել՝ քաղաքապետարանը չի նշել: Բանն այն է, որ այս տարածքում շինարարություն են անցկացնում 2 ընկերությունները համատեղ: Կառուցապատող ընկերությունները մամուլի ուշադրության կենտրոնում արդեն հայտնվել են. «Ն եւ Ս քոնսթրաքշն» ՍՊԸ-ում բաժնեմաս ունի ԱԱԾ քննչական դեպարտամենտի նախկին պետ Արթուր Աղաջանյանի կինը՝ Արմինե Եղիազարյանը: Հիշեցնենք՝ «Ն եւ Ս քոնսթրաքշն» ՍՊԸ-ն քաղաքապետարանին նվիրել էր 10 հատ «ԳԱԶ» մակնիշի եւ 4 «ԿամԱԶ» մակնիշի աղբատարեր՝ թերեւս շինթույլտվությունների կամ այլ մի բանի համար, որոնց մասով մամուլը ժամանակին անդրադարձել էր: Ըստ «Հետք»-ի՝ «Կաէռ քոնսթրաքշն» ՍՊԸ-ն նաեւ ֆիրդուսու թաղամասի կառուցապատողներից է: Դրա քույր՝ «Կաէռ մայնինգ» ՍՊԸ-ն 2-րդ, 4-րդ եւ 5-րդ լոտերի սեփականատերն է, բայց Դավթաշենի կառուցած շենքերի վկայականները հապաղում է տալ:

Ըստ «Սեւան» ազգային պարկի կայքի՝ 2022 թվականի ապրիլի 5-ից հետո ՊՈԱԿ-ում կենդանության նշանները բացակայում են. 79 հաստիք, 15 մեքենա, միլիոնավոր դրամների աշխատավարձի ֆոնդ, բայց ոչ մի աշխատանք: Այս բնորոշումը, ցավոք, վերաբերում է Սեւանա լճի տարածքին, որը Հակոբ Սիմիդյանի կառավարմամբ «բարեհաջող» կործանվում է. եւ եթե ֆուտբոլի ֆեդերացիայի՝ ՔՊ-ականների կողմից թույլ տված ձախողումները ապագա իշխանությունները մի կերպ կշտկեն, Սեւանի էկոլոգիական աղետը անդառնալի հետեւանքներ կունենա: Ներկայացվող լուսանկարները (Տե՛ս ArmLur.am կայքում) ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի վերջին «նորություններն» են, որոնք ամբողջությամբ «հնություն» են: «Սեւան» ազգային պարկի տնօրենը 2022 թվականի մարտին ՊԿԾ ղեկավար Ռոմանոս Պետրոսյանի ջանքերով նշանակված Կարեն Մնացականյանն է:

Գաղտնիք չէ, որ իշխող ՔՊ-ում բոլոր որոշումները միանձնյա կարգով Նիկոլ Փաշինյանն է կայացնում՝ առանց թիմակիցների կարծիքը հաշվի առնելու, շատ դեպքերում՝ անգամ իր որոշումների մասին չի էլ տեղեկացնում թիմակիցներին՝ անակնկալի բերելով նրանց: Այսպիսով, վերջերս այս մասին վկայող հերթական «թարմ» դեպքն արձանագրվեց: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Հայաստանյան 4 քաղաքական ուժեր՝ «Հանրապետություն» կուսակցությունը, «Հանուն Հանրապետության», «Քրիստոնեա-ժողովրդավարական» եւ «Հայաստանի եվրոպական» կուսակցությունները Հայաստանի՝ Եվրոպական միությանն անդամակցության հայտ ներկայացնելու հարցով հանրաքվե անցկացնելու առաջարկով դիմել էին իշխանություններին: ՔՊ-ականները սա մեծ շուքով ներկայացրին, ու անգամ խորհրդարանական լսումներ անցկացվեցին այս թեմայով: Տպավորություն էր ստեղծվել, թե ՔՊ-ում հանրաքվեի պատրաստություն են տեսնում: ՔՊ-ի կարկառուն ներկայացուցիչներից Ալեն Սիմոնյանն էլ իր հերթին Լատվիայի Սեյմի խոսնակ Դաիգա Միերինայի հետ հանդիպումից հետո հայտարարել էր. «Կարծում եմ՝ մոտ ապագայում կլինի ԵՄ-ին անդամակցության հանրաքվե, եւ վստահ եմ, որ մեր ժողովուրդը կասի՝ այո»: Բայց, արի ու տես, որ ՔՊ-ում տեղյակ չեն, որ Նիկոլ Փաշինյանը լրիվ այլ ծրագրեր ունի: Ընդամենը երկու օր առաջ՝ հուլիսի 1-ին, Ժողովրդավարության հայկական ֆորումի ժամանակ Փաշինյանը հայտարարեց, որ ոչ մի հանրաքվե էլ չի լինելու, քանի որ ինքը «գիտի ժողովրդի կարծիքը»: Նիկոլ Փաշինյանն իր այս սպոնտան որոշումներով, ըստ էության, հերքեց ու անորոշ դրության մեջ դրեց թե՛ Ալեն Սիմոնյանին, թե՛ ողջ ՔՊ-ին: Սրանից կարող ենք կրկին արձանագրել, որ Փաշինյանը բացառապես միանձնյա որոշումներ է կայացնում ու իր թիմակիցների տեսակետը հաշվի չի էլ առնում՝ մշտապես փաստի առաջ կանգնեցնելով:

ԶՐՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ԻՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱ ԵՄ-ՈՒՄ

Հայաստանյան 4 քաղաքական ուժ՝ «Հանրապետություն» կուսակցությունը, «Հանուն Հանրապետության», «Քրիստոնեա-ժողովրդավարական» եւ «Հայաստանի եվրոպական» կուսակցությունները Հայաստանի՝ Եվրոպական միությանն անդամակցության հայց ներկայացնելու հարցով հանրաքվե անցկացնելու առաջարկով դիմել էին իշխանություններին: Այս հարցով անգամ լսումներ անցկացվեցին խորհրդարանում:

Նիկոլ Փաշինյանը, սակայն, երեկ (խմբ.) հայտարարեց, որ հանրաքվե չի լինելու, քանի որ ինքը արդեն գիտի հանրության դիրքորոշումը:

ArmLur.am-ը այս առիթով զրուցել է նաեւ «Հանուն Հանրապետության» կուսակցության ղեկավար Արման Բաբաջանյանի հետ:

-Պարոն Բաբաջանյան, Ձեր առաջարկը մեծ ոգեւորությամբ ընդունվեց, բայց երեկ Նիկոլ Փաշինյանը, ըստ էության, մերժեց այն՝ ասելով, որ հանրաքվե չի լինելու: Ինչո՞ւ մերժեցին իշխանությունները ձեր առաջարկը:

-Մենք չորս քաղաքական ուժերով դեռ չունենք հավաքական պատասխան, բայց նորմալ է, մենք առաջարկ ենք արել, իշխանությունները պատասխան են տվել, պետք է փորձենք, հասկանանք՝ սա վերջնակա՞ն պատասխանն է, թե՞ ոչ, եւ ըստ այդմ՝ կծրագրենք մեր գործողությունները: Այնպես չէ՝ երբ մենք նման առաջակ էինք անում, վստահ էինք, որ իշխանությունը դրական արձագանք է տալու, հասկանում ենք, որ եթե իշխանությունը նման դիրքորոշում ունի, ապա ահռելի աշխատանք կա անելու թե՛ հանրության, թե՛ իշխանության հետ, որպեսզի գանք այն եզրահանգման, որ պետք է հանրաքվեն տեղի ունենա: Դա անքննարկելի հարց է մեզ համա ր, քանի որ սա ընտրություն է մեռնելու եւ ապրելու միջեւ, ես հույս ունեմ՝ մենք համախոհ ենք, որ ապրել ենք ուզում: Սրա այլընտրանքը Հաայաստանի համար, հենց վարչապետի ձեւակերպմամբ, մեր պետականության չգոյությունն է:

-Արդյոք սա հետքայլ չէ՞ր իշխանությունների կողմից:

-Ես հետքայլի մասին չգիտեմ: Խորհրդարանական լսումները եղել են մեր առաջարկը, ես գնացել եմ, հանդիպել եմ Աժ նախագահին, այդ առաջարկով եմ հանդես եկել, քննարկում եմ ունեցել ինչպես կարգն է, եւ Եվրոպական ինտեգրման հարցերի հանձնաժողովը լսումներ է կազմակերպել այս հարցով, բայց թե իշխանությունն ունեցել է դիրքորոշում, որ հանրաքվե պետք է անցկացվի, չունեմ նման տեղեկություն:

-Անգամ Աժ նախագահ Ալեն Սիմոնյանը հայտարարել էր, որ մոտ ապագայում ԵՄ-ին անդամակցելու հարցով հանրաքվե կունենանք:

-Ի սկզբանե, ես այն տպավորություն ունեի, որ իշխանությունը հակված չէ այս փուլում հանրաքվե անցկացնելու, կարծում եմ, որ այս հարցը կտանեն, 2026թ.-ի քարոզարշավի մաս կդարձնեն եւ կփորձեն դրանից քաղաքական դիվիդենտներ ու կապիտալ ստանալ:

-Այսինքն՝ 2026թ.-ի ընտրություններին ԵՄ անդամակցության հարցի շո՞ւրջ կկառուցեն քաղաքական օրակարգը:

-Վստահ չեմ, բայց այդպիսի տպավորություն ունեմ, գոնե այն, ինչ վարչապետն ասաց, ձեւավորեց այն կարծիքը, որ հարցը տանելու են 2026թ: Մեր առաջարկը նրա մասին էր, որ մենք սպառնալիքների մեջ ենք, եւ այդ սպառնալիքներին դիմակայելու համար պետք է մինչեւ նոյեմբեր կազմակերպել հանրաքվե:

Հանրաքվեն ԵՄ անդամության հարց չի ներկայացնում, դա չի ենթադրում, որ մենք պետք է սպասենք, որ եվրոպացի պաշտոնյաները մեզ ասեն՝ պատրաստ են ընդունել մեզ, թե ոչ. իրենք երբեք դա չեն ասելու: Եթե մեզ թվում է, որ այստեղ նստած, անգործ, անկյալ, մեզ ԵՄ-ից հրավիրելու են մեր սիրուն աչքերի համար՝ սխալվում ենք: Մենք պետք է 24/7 ռեժիմով աշխատենք, որպեսզի պետք լինենք ԵՄ-ին, նրա տնտեսությանը, անվտանգությանը եւ ընդհանրապես՝ ԵՄ-ն ոչ թե ստանալու, այլ տալու մասին է: Ընդհանրապես մենք պատկերացում ունե՞նք՝ ինչ ունենք տալու ԵՄ-ին:

-Իսկ ըստ Ձեզ՝ մենք ի՞նչ ունենք տալու ԵՄ-ին, ինչո՞վ պետք է շահագրգռենք, որ ԵՄ-ն ընդունի մեզ:

-Իհարկե, ունենք, ահռելի շատ բան: Մենք այդ քաղաքակրթության մասն ենք, այս տարածաշրջանի նկատմամբ կա ընդգծված հետաքրքրություն՝ տնտեսական, քաղաքական եւ աշխարհաքաղաքական ու Հայաստանն այստեղ անելիք ունի, Հայաստանը պետք է իր ավանդն ունենա, որպեսզի շահերի ներդրում լինի՝ ԵՄ-ի եւ մեր միջեւ:

Մենք այստեղ շահերի ու նպատակների ահռելի ընդհանրություններ ունենք, բայց մենք մեր մակերեսային ու կիսատ-պռատ քայլերով շատ կասկածներ ենք հարուցում ԵՄ-ի շրջանում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲՆԱՋՆՋՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը «Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղում հայեր չկան» վերնագրով լայնածավալ փաստահավաք զեկույց է ներկայացրել, որում մանրամասն կերպով ուսումնասիրության են առնվում ԼՂ-ում տեղի ունեցած իրադարձությունները՝ սկսած 2020 թվականի երկրորդ ղարաբաղյան պատերազմից մինչեւ 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ռազմական հարձակմամբ եւ դրա հետեւանքներով:

Զեկույցում առանձնացված է հատված «Լեռնային Ղարաբաղի ջնջում» վերնագրով, որում մանրամասն ներկայացվում է Արցախի բնաջնջումը.

«2024 թվականի մարտի 18-ին Ալիեւը պարծենկոտ ելույթ է ունեցել ամայացած Ստեփանակերտից՝ հայտարարելով, որ արդարությունը վերականգնվել է»:

Զեկույցում մանրամասն ներկայացվում է, որ Բաքուն շարունակել է ոչնչացնել հայ համայնքների, մշակույթի գոյության վկայությունները եւ Ժառանգությունը Լեռնային Ղարաբաղում:

Արբանյակային փաստահավաքից ստացված լուսանկարները ցույց են տալիս հայկական գերեզմանատների, եկեղեցիների եւ բնակելի թաղամասերի ավերումը:

«Նախկինում հայաբնակ Քարին Տակ գյուղը ջնջվել է երկրի երեսից, այս քաղաքականության եւս մեկ վառ օրինակ է՝ ոչնչացումը 18-րդ դարի Սղնախի գերեզմանատունը: Ինչպես հաղորդում է Caucasus Heritage Watch-ը, Ադրբեջանը տարածքը մաքրել է բուլդոզերներով՝ իբր ճանապարհ կառուցելու համար: Այս քաղաքականությունն անդրադարձել է նաեւ Ստեփանակերտի բնակելի թաղամասերին: Կան մասնավոր վնասի սեփականության ապացույցներ»:

Զեկույցում նշվում է՝ «Այս իրադարձությունները ցույց են տալիս հաջորդականությանը բոլոր հետքերը ոչնչացնելու ադրբեջանական պետության գործողությունների հայկական ներկայությունն ու ժառանգությունը Լեռնային Ղարաբաղում: Դրանք համահունչ են ձեռնարկված միջոցառումներին եւ այն նորմատիվները, որոնք օգտագործել է Ալիեւի կառավարությունը 2020 թվականի զինված հակամարտությունից անմիջապես հետո միջազգային դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը խախտվել է:

Այս մոտեցման հստակ օրինակ էր Ալիեւի հայտարարությունը՝ 2021 թվականի մարտին Հադրութ կատարած այցի ժամանակ, նախկինում հայերով բնակեցված քաղաք, որը գերեվարվել է Ադրբեջանի կողմից 4 ամիս առաջ, կանգնած է 12-րդ դարի հայոց Սուրբ Աստվածածնի մոտ, «Այս բոլոր գրությունները կեղծ են, դրանք գրվել են ավելի ուշ: Նրանք կեղծ պատմություն են ստեղծել իրենց համար մեր հինավուրց հողերում : Մյուսի վրա՝ «նրանց «հայկական» պատմությունը, նրանց անցյալը, նրանց պետականությունը եւ նրանց դիցաբանությունը ոչ այլ ինչ են, քան կեղծիք»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԼԻԵՎԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Վերադարձի իրավունքը պետք է ապահովվի փոխադարձաբար, այդ թվում՝ «Արեւմտյան Ադրբեջանի համայնքի» ներկայացուցիչների համար. այս մասին, ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն, հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ ի պատասխան Կանադայի դեսպանի՝ վերադարձի իրավունքի վերաբերյալ մեկնաբանությանը:

Ալիեւը պնդել է, թե իբր անցած դարում «բնիկ ադրբեջանական բնակչությունը տարբեր փուլերում, վերջինը՝ 1988 թվականին, ենթարկվել է էթնիկ զտումների Հայաստանի տարածքում, եւ նրա նյութական եւ մշակութային ժառանգությունն ամբողջությամբ ոչնչացվել է»:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Խաղաղության պայմանագրի տեքստի վրա աշխատանքը, գոնե դրա հիմնարար սկզբունքների շուրջ, կարող ենք ավարտին հասցնել մի քանի ամսվա ընթացքում:

ԱՊԱ-ի հաղորդմամբ, այս մասին հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ հուլիսի 1-ին Կանադայի դեսպան Քեւին Համիլթոնի հետ ունեցած զրույցի ժամանակ:

«Կարծում եմ, որ մենք կարող ենք ավարտել աշխատանքը խաղաղության պայմանագրի տեքստի վրա, առնվազն դրա հիմնական սկզբունքների մասով մի քանի ամսվա ընթացքում: Կարող է տարբերակներից մեկը լինել, որի շուրջ կարելի է համաձայնության գալ, նախաստորագրել դրանք, ապա աշխատել տեքստի վրա»,- ասել է Ալիեւը:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆԸ «ՄԵՆԱՄԱՐՏԻ» Է ԴՈՒՐՍ ԵԿԵԼ

ՔՊ-ական Արսեն Թորոսյանը, որը 2021 թ.-ին Աժ ամբիոնից հայտարարել էր, որ աթեիստ է, այլեւս անթաքույց «մենամարտի» է դուրս եկել ընդդեմ եկեղեցու: Բազմիցս, ընդդեմ Հայ առաքելական եկեղեցու արված հայտարարություններով աչքի ընկած ՔՊ-ականը հերթական աղմկահարույց հայտարարությունն է արել:

Ըստ ՔՊ-ականի՝ որքան թույլ է եկեղեցին, այնքան ուժեղ է պետությունը.

«Այս ամեն ինչի արդյունքը եղավ այն, որ առանց այն էլ հեղինակազրկված Հայ առաքելական եկեղեցին ավելի հեղինակազրկվեց, ինչից ես անձնապես ուրախանում եմ, որովհետեւ ինչքան եկեղեցին թույլ է, այնքան ուժեղ է պետությունը, ու դա այդպես է բոլոր պետություններում»,- հայտարարել է Թորոսյանը՝ անդրադառնալով Բագրատ Սրբազանի առաջնորդությամբ սկսված շարժմանը:

Թե ինչ տրամաբանությամբ է ՔՊ-ականը առաջնորդվում, որ նման եզրահանգումների է եկել, հայտնի չէ, բայց այն, որ ՔՊ-ում ընդդեմ եկեղեցու սկսված այս տհաճ «կռիվը» գնալով թեժանում է, դա ակնհայտ է:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ ԵՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ

Էրդողանական Թուրքիայի մի շարք քաղաքներում տեղի են ունեցել վայրենի հարձակումներ սիրիացի փախստականների բնակության վայրերի վրա՝այս երկրից վերջիններիս հեռացման պահանջով:

Այս մասին թելեգրամյան իր ալիքում գրել է իրանագետ Վարդան Ոսկանյանը:

«Սիրիական պատերազմը եւ դրա հետեւանքով միլիոնավոր փախստականները հետեւանքն են նաեւ էրդողանական վարչախմբի կողմից հարեւան Սիրիայի հանդեպ վարված ուխտադրուժ եւ գիշատիչ քաղաքականության, իսկ հիմա, տուրք տալով օսմանյան շրջանից եկող տխրահռչակ ավանդույթներին, ջարդարարները Թուրքիայի տարբեր քաղաքներում հարձակվում են սիրիացի փախստականների բնակության վայրերի վրա:

Սա «լուսավոր» 21-րդ դարի էրդողանական Թուրքիայի իրական դեմքն է, իսկ հիմա պատկերացրեք, թե ինչ է կատարվել հայերի, եզդիների, ասորիների եւ հույների հանդեպ 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին նույն այս երկրում»,- գրել է նա:

ԲԱՅԴԵՆԻ ԱՄԵՆԱՀԱՎԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՂԸ

ԱՄՆ փոխնախագահ Քամալա Հարիսը, չնայած իր քաղաքական թուլությանը, համարվում է ամենահավանական թեկնածուն ընտրարշավում գործող՝ նախագահին փոխարինելու համար, եթե նա դուրս գա ընտրապայքարից:

Թերթի գնահատմամբ՝ թեեւ Հարիսի վարկանիշը նույնքան ցածր է, որքան եւ գործող նախագահինը, նրա ռեյտինգը բարձր է մնում սեւամորթ ընտրողների եւ կանանց շրջանում: Հարիսը նաեւ էական առավելություն ունի դեմոկրատների մյուս պոտենցիալ թեկնածուների հանդեպ. որպես փոխնախագահ առաջադրվելով Բայդենի հետ՝ նա կարող է օգտագործել իր հավաքած միջոցները սեփական ընտրարշավը ֆինանսավորելու համար, եթե Սպիտակ տան ղեկավարը որոշի չհավակնել վերընտրության:

Ինչպես գրել է պարբերականը, վերջին ժամանակներս Հարիսը նաեւ սկսել է ամրացնել իր դիրքերը Բայդենի վարչակազմում, այդ թվում՝ ազգային անվտանգության հարցերում: Նա Սպիտակ տան պաշտոնյաներին կոչ է արել ավելի մեծ ուշադրություն հատկացնել Գազայի հատվածի հումանիտար խնդիրներին եւ կենտրոնանալ անկլավում հետհակամարտային կարգավորման պլանի մշակման վրա:

ԱՄՆ-ում նախագահական ընտրությունները տեղի են ունենալու նոյեմբերի 5-ին: Թրամփն արդեն հավաքել է պատվիրակների ձայների անհրաժեշտ քանակությունը հանրապետականների կողմից պետության ղեկավարի թեկնածու առաջադրվելու համար: Բայդենը, որն առաջադրվելու է երկրորդ ժամկետի համար, ունի Դեմոկրատական կուսակցության բավականաչափ թվով պատվիրակների աջակցությունը:

Freedom House-Ի ԶԵԿՈՒՅՑԸ

ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ԴԵՊՔԵՐԻՆ

Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը «Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղում հայեր չկան» վերնագրով լայնածավալ փաստահավաք զեկույց է ներկայացրել, որում մանրամասն կերպով ուսումնասիրության են առնվում ԼՂ-ում տեղի ունեցած իրադարձությունները՝ սկսած 2020 թվականի երկրորդ ղարաբաղյան պատերազմից մինչեւ 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ռազմական հարձակմամբ եւ դրա հետեւանքներով:

Զեկույցում առանձնացված է հատված «Հրադադարից մինչեւ շրջափակում. Լեռնային Ղարաբաղը 2020 թվականի Նոյեմբերի 9-ից հետո» ենթավերնագրում, որում մանրամասն ներկայացված է, թե ինչպես է փոփոխվել կյանքն Արցախում եւ ինչ են պատմում բռնի տեղահանվածները:

«44-օրյա պատերազմը տրավմատիկ փորձ էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համար: Ավերածությունները, տեղահանումները եւ մարդկային կորուստները սրել են բնակիչների շրջանում Ադրբեջանի հանդեպ գոյություն ունեցող, համընդհանուր վախի զգացումը: Ադրբեջանի զինված ուժերի զինծառայողների կողմից արտադատական սպանությունների, խոշտանգումների եւ առեւանգումների մասին հիշողությունները եղել են հարցազրույցներում կրկնվող խոր թեմա, այդ թվում՝ տարեցների եւ հաշմանդամություն ունեցող անձանց: Հարցվածներից շատերը նշել են, թե որքան են վախեցել հանդիպել ադրբեջանցի զինծառայողների հետ: Նրանց հետ հանդիպելու հավանականությունը մտավախություն է առաջացրել սպանվելու, խոշտանգվելու կամ առեւանգվելու»:

Freedom House-ի զեկույցն ունի հստակ օրինակներ՝ անուն առ անուն, պատմություն առ պատմություն:

«Օրինակ՝ Դրախտիկ գյուղից մի կին, որին կանգնեցրել էին ադրբեջանցի զինվորները, երբ 2023 թվականի սեպտեմբերին ընտանիքի հետ փախչում էր Հայաստան, հիշում էր, թե ինչպես էր վախենում, որ իր ընտանիքի անդամները կարող են առեւանգվել կամ վիրավորվել, քանի որ նման արարքները սովորական բան են եղել 2020 թվականի պատերազմի ժամանակ: Մեկ այլ կին հայտարարել է, որ իր հայրը՝ քաղաքացիական անձ, գերի է վերցվել ադրբեջանական զինուժի կողմից պատերազմի ժամանակ:

Զինված բախումներն ու խոշտանգումները դժվարացրել են նորմալ կյանքի պատկերացումները Ադրբեջանի կողմից պարտադրված պայմաններում: Այս տարածված անապահովության զգացումը հաստատվել է հետպատերազմյան շրջանում ադրբեջանական զինուժի կողմից պարբերաբար կրակոցներով եւ ահաբեկչական գործողություններով:

Քաղաքացիական բնակչության վրա հարձակումներ եւ ահաբեկումներ.

Ադրբեջանական ռազմական հենակետերի մոտ գտնվող համայնքներում ապրող մարդկանց հետ հարցազրույցները ցույց են տալիս ադրբեջանցի զինծառայողների կողմից խաղաղ բնակչության վրա հարձակումների եւ ահաբեկման հետեւողական օրինաչափություն՝ բնակելի թաղամասերի վրա կրակելու, գյուղատնտեսական աշխատանքների եւ ենթակառուցվածքների վերանորոգման աշխատանքների խափանման եւ մարդկանց տները լքելու սպառնալիքների տեսքով:

Օրինակ՝ 2021 թվականի հոկտեմբերին Մարտակերտից տրակտորիստը սպանվել է ադրբեջանական զինուժի կողմից՝ ռուս խաղաղապահի ներկայությամբ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս: Հաջորդ ամիս էթնիկ հայ խաղաղ բնակիչները ջրի խողովակի վերանորոգման ժամանակ կրակոցների թիրախ դարձան: Նրանցից մեկը զոհվել է, իսկ երեքը վնասվածքներով հոսպիտալացվել են: Եվս մեկ քաղաքացիական անձ (Ճարտարից) սպանվել է ադրբեջանական զինուժի կողմից 2021 թվականի դեկտեմբերին՝ իր անասուններին արածեցնելիս: Հավաքված հարցազրույցներից հետեւյալ մեջբերումները վկայում են տեղի բնակիչների կողմից նկատված ընդհանուր իրավիճակի մասին»:

Միջազգային մի քանի գործակալություններից եւս ստացվել են եւ արձանագրվել են զեկույցներ Արցախից բռնի տեղահանվածների վերաբերյալ, որոնք ծանրակշիռ ոչ մի կառույցում Ադրբեջանի դեմ գործողությունների սկիզբ չդարձան:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՀԱՔԱՆԳԵՐ

ԲԱՆԱԿՈՒՄ ԱՐԳԵԼՈՒՄ ԵՆ ԽԱՉ ԵՎ ԱՂՈԹԱԳԻՐՔ ՊԱՀԵԼ

Պատմությունը ցույց է տալիս, որ երկրում տեղի ունեցող յուրաքանչյուր օրհասական պահի ժողովրդի կողմին եւ բնակամու առաջ միշտ պաշտպան եւ բանակցող է դարձել եկեղեցին:

Ըստ Փաշինյանի՝ Հայ առաքելական սուրբ եկեղեցին, Հայ կաթողիկե եկեղեցին, Հայ ավետարանական եկեղեցին եւ քրիստոնեությունը համարվում են ՀՀ ազգային արժեքներ, սակայն իշխանության քայլերը նրանց հայտարարության դեմ է ուղղված:

Բանն այն է, որ օրերս «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն տարբեր քաղաքացիներ էին ահազանգել այն մասին, որ Հայոց բանակ զորակոչվող տղաներին արգելում են իրենց մոտ ունենալ խաչ եւ գրպանի փոքր աղոթագիրք: Ահազանգողը զինծառայողի հարազատ էր, ով պնդում էր, որ ոչ միայն նորակոչիկների, այլեւ արդեն մեկ տարի եւ ավելի ծառայած տղաներին արգելել են բանակում եկեղեցական աղոթագիրք՝«Նարեկ», եւ խաչ ունենալ: Այս մասին տեղյակ են նաեւ եկեղեցում, եւ եկեղեցականների մոտ էլ են որոշ հարցեր առաջացել:

Այսինքն՝ եկեղեցու դեմ ուղված քաղաքական ճնշումը մտել է նաեւ զորամասեր:

Ահազանգողը պնդում էր, որ նույնիսկ փայտից խաչեր չեն թողնում ունենալ. «Հասկանալի է արգելքը ոսկյա կամ երկաթյա, թեկուզ արծաթյա խաչերի դեպքում, որպեսզի վեճեր չլինեն, բայց փայտը ի՞նչ պետք է անի: Նույնիսկ փայտից խաչ, բրոշ չի կարելի կպցնել»,- ասաց «Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը:

Հիշեցնենք, որ դեռ 2018 թվականին ՀՀ վարչապետ Փաշինյանը 10-ամյա երեխաների էր հյուրընկալում՝ նվեր ստանալով խաչ եւ աղոթագիրք, խոստանում էր, որ ամեն բան անելու է, որպեսզի հայ զինվորները առողջ լինեն եւ առողջ տուն վերադառնան, սակայն, ինչպես տեսնում ենք՝ արգելում են ունենալ Աստծո պահապան խաչն ու աղոթագրքերը:

Այս խնդրով «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ՊՆ մամուլի խոսնակ Արամ Թորոսյանի հետ՝ պարզելու՝ ո՞րն է պատճառը արգելքի խաչ եւ աղոթագիրք ունենալու: Մեզ հետ զրույցում Արամ Թորոսյանն ասաց, որ այս տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, նման բան չկա:

Չնայած վերը նշվածին՝ հիշեցնենք, որ անգամ պատերազմի դաշտ մեկնելուց էլ զինվորների գրպանում եղել է խաչն ու գրպանի աղոթագիրքը, իսկ մեջքին՝ զինվորական համազգեստի վրա, սպիտակ մեծ խաչ է կարվել՝ որպես ապացույց այն բանի, որ զինվորը քրիստոնյա է, հայ է, ոչ ադրբեջանցի:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ

ԴԻՄՈՒՄ՝ ԱՅԼ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ

«Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջ»-ի ուսանողի՝ 17-ամյա Ռաֆայել Հովհաննիսյանի մայրը՝ Քրիստինե Գաբրիելյանը դիմել է իրավապահներին, որպեսզի իր որդու սպանության գործը քննվի հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունում:

Ինչպես հայտնի է՝ 2024 թվականի մարտի 12-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, «Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջ»-ի ուսանող 17-ամյա երիտասարդն ընկերոջ հետ գտնվել է քոլեջին հարող տարածքում գործող սննդի կետի մոտ, երբ 6-7 երիտասարդներ, այդ թվում՝ 21-ամյա երիտասարդը, վազել են տուժողի ուղղությամբ: Նշված անձանցից մեկի ձեռքում փայտե մահակ է եղել, իսկ 21-ամյա երիտասարդի ձեռքին՝ դանակ: Երիտասարդների միջեւ կրկին վիճաբանություն է սկսվել, որի ժամանակ 21-ամյա երիտասարդը դանակով մի քանի անգամ հարվածել է 17-ամյա երիտասարդի մարմնի տարբեր հատվածներին, ինչի հետեւանքով նա վայր է ընկել, որից հետո տղաները, գետնին ընկած վիճակում, շարունակել են ոտքերով հարվածներ հասցնել երիտասարդի մարմնին, իսկ 21-ամյա երիտասարդը դանակով հարվածել է նրան:

Հավաքված անձանց միջամտության արդյունքում վիճաբանությունը դադարել է: Իրավապահները հայտնաբերել են դանակահարողին եւ նրա հետ քոլեջի տարածքում տղային մահակներով ծեծի ենթարկած մյուս ենթադրյալ հանցագործներին: Դեռեւս 1,5 ամիս անց նախաքննական մարմինը հայտնել էր, որ նախաքննական մարմնի կողմից ձեռնարկված մեծածավալ միջոցառումներով պարզվել է նաեւ միջադեպի ժամանակ տուժողին մահակի գործադրմամբ մարմնական վնասվածքներ հասցրած անձի ինքնությունը, ով 21-ամյա երիտասարդի մեկ այլ ընկերն է, ում նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել եւ հայտարարվել հետախուզում:

Դեպքից ամիսներ անց կոմիտեն հայտնեց՝ ձեռք բերված նոր փաստերի հիման վրա վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին՝ մեղադրյալներին առաջադրված մեղադրանքները փոփոխելու եւ նրանց նկատմամբ նոր հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որոնք բավարարվել են: Արդյունքում՝ 21-ամյա Դ.Պ.-ն-ին մեղսագրվող արարքների ծավալից հանվել է սպանության մեղադրանքը եւ նոր մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ կետերով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով: Խափանման միջոցը թողնվել է անփոփոխ: Նույն հոդվածներով նոր քրեական հետապնդում է հարուցվել նաեւ հետախուզման մեջ գտնվող Հ.Ս.-ի նկատմամբ:

Հիշեցնենք թե օրերս ինչ ուշագրավ մանրամասներ էր հայտնել քննչական կոմիտեն.

«Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում՝ «ՀՀ ՔԿ-ն տեղեկացրել էր, որ 2024 թվականի մարտի 12-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, 6-7 երիտասարդներ, այդ թվում՝ Երեւան քաղաքի բնակիչներ, 21-ամյա Դ.Պ.-ն, վերջինիս ընկերներ՝ 21-ամյա Ա.Մ.-ն եւ 19-ամյա Հ.Ս.-ն, վազել են նրա ուղղությամբ: Երիտասարդների միջեւ վիճաբանություն է սկսվել, ապա հավաքված անձանց միջամտության արդյունքում վիճաբանությունը դադարել է, հիշյալ 6-7 տղաները դիմել են փախուստի:

Նախաքննության արդյունքում 21-ամյա Դ.Պ.-ին մեղսագրվող արարքների ծավալից հանվել է սպանության մեղադրանքը եւ նոր մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ կետերով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով: Խափանման միջոցը թողնվել է անփոփոխ: Նույն հոդվածներով՝ նոր քրեական հետապնդում է հարուցվել նաեւ հետախուզման մեջ գտնվող Հ.Ս.-ի նկատմամբ:

Իսկ Ա.Մ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով: Վերջինս իրեն լիովին մեղավոր է ճանաչել եւ տվել է խոստովանական ցուցմունքներ:

Դատարանի որոշմամբ՝ նրա նկատմամբ նախկինում կիրառված խափանման միջոց տնային կալանքը փոփոխվել է, եւ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ

Ավարտվել է մաքսանենգ ճանապարհով ձեռք բերված, մաքսային հսկողությունից թաքցնելու եղանակով՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության պետական սահմանով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի տեղափոխելուն օժանդակելու, ինչպես նաեւ իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու, պահելու եւ տեղափոխելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Արմավիրի մարզի 4 բնակիչներին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

1.6 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է համակարգչային հափշտակություն կատարելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Քննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ 2021 թվականի հոկտեմբերից մինչեւ 2023 թվականի օգոստոս ընկած ժամանակահատվածում, համակարգչային հափշտակություն կատարելու դիտավորությամբ, շարունակաբար, առանց իրավաչափ հիմքով նախատեսված թույլտվության տվյալներ մուտքագրելու միջոցով, Երեւան քաղաքի 37-ամյա բնակչուհին ապօրինի հասանելիություն է ստացել «adjarabet.am» եւ «totogaming.am» բուքմեյքերական կայքերում գրանցված մի քանի անձանց խաղային հաշիվներին եւ դրանց կցված բանկային քարտերի հաշիվներից ելքային փոխանցումներ կատարել իր խաղային հաշիվներին՝ այդ կերպ ստանալով դրանք տնօրինելու, օգտագործելու հնարավորություն:

Նախաքննության տվյալներով՝ վերոհիշյալ եղանակով քաղաքացիներից հափշտակված գումարի չափն ընդհանուր առմամբ կազմում է 1.665.400 ՀՀ դրամ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 37-ամյա կնոջը մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 257- րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԴԵՊՔԵՐ՝ ԲԱՆՏՈՒՄ

1 ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼ ԵՎ 1 ԿԱԼԱՆԱՎՈՐ ՄԱՀԱՑԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններ համաձայն՝ ՀՀ բանտերում այս պահին խիստ անհանգստացած են, քանի որ երեկ 2 դատապարտյալներ են մահացել:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց քրեակատարողական ծառայության լրատվական բաժին, որտեղից հաստատեցին՝ նշելով.

«ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող դատապարտյալ, 1966 թվականին ծնված Հ.Կ.-ի ինքնազգացողության վատթարացման պատճառով հունիսի 30-ին՝ ժամը 22:10-ի սահմաններում, կանչվել է շտապօգնություն:

Հ.Կ.-ն տեղափոխվել է քաղաքացիական հիվանդանոց: Հուլիսի 1-ին՝ ժամը 01:20-ի սահմաններում, հիվանդանոցում արձանագրվել է վերջինիս կենսաբանական մահը:

Հ.Կ.-ն մշտապես գտնվել է ՀՀ առողջապահության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի հսկողության ներքո:

Սույն թվականի հունիսի 30-ին՝ ժամը 03:00 սահմաններում, ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձ, 1964 թվականին ծնված Գ. Հ.-ի առողջական վիճակի կտրուկ վատթարացման պատճառով կանչվել է շտապօգնություն: Տեղում ցուցաբերվել է առաջին բուժօգնությունը, որից հետո Գ. Հ.-ին շտապօգնության մեքենայով տեղափոխել են քաղաքացիական հիվանդանոց:

Հուլիսի 1-ին՝ ժամը 11:10-ի սահմաններում, քաղաքացիական հիվանդանոցում գրանցվել է կալանավորված անձ Գ. Հ.-ի կենսաբանական մահը»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 1-ից հուլիսի 2-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 70 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՎԱՐԵԼԱՀՈՂ Է ՀԱՆՁՆՎԵԼ

Հունիսի 30-ին Կիրանց գյուղի մոտ ադրբեջանական զինուժը տեղադրել է մեծ դրոշակ, որը տեսանելի է նաեւ Կիրանցի հարեւան՝ Աճարկուտ գյուղի տարածքից: Դա հոգեբանորեն վատ է ազդում Կիրանցի եւ Աճարկուտի բնակիչների վրա: Կիրանց բնակավայրի վարչական ղեկավար Կամո Շահինյանը հաստատեց, որ գյուղի գերեզմանատանը մոտակա «Խաչի յալ» տարածքի մոտ տեղադրվել է Ադրբեջանի մեծ դրոշ: Վարչական ղեկավարը հայտնեց, որ ՀՀ դրոշն էլ է տեղադրված այդ հատվածում: Կ. Շահինյանին հարցրինք Քարահան գետի աջ ափին՝ Կիրանցի 8 հեկտար վարելահողերի մասին, որոնց տերերը կադաստրի կոմիտեից ունեն սեփականության վկայաններ, սակայն այդ հողերը հանձնվել են Ադրբեջանին: Կ. Շահինյանը հաստատեց,որ այդ 8 հեկտարը կադաստրի վկայականներով պատկանել է Կիրանց գյուղի մեկ տասնյակից ավել բնակիչների: Նրան հարցրինք՝ այդ հողերի տերերին պետության կողմից դրամական փոխհատուցման մասին: Վարչական ղեկավարն ասաց, որ ինքն այդ հարցով չի զբաղվում, դրանով զբաղվում են Տավուշի մարզպետարանը եւ Իջեւանի համայնքապետարանը: Կիրանցի բնակիչները մեր լրագրողին հայտնել են, որ այդ 8 հեկտարի համար պետության կողմից դրամական փոխհատուցումը լինելու է մեկ քառակուսի մետրի համար 3 դոլարի չափով: Կ. Շահինյանը հավելեց, որ ներկայումս ընթանում է միջպետական ավտոճանապարհի նոր՝ Աճարկուտ գյուղով ձգվող հատվածի շինարարությունը, որը պետք է գործարկվի հուլիսի 24-ին:

ԲՈՒԺԿԵՏԻ ՏԱՆԻՔԸ ՉՆՈՐՈԳՎԵՑ

Սահմանամերձ Բարեկամավանի բուժկետի տանիքի կեսը 2020 թ.-ին ուժգին քամին քշել-պոկել է, միահարկ շենքի կեսը ծածկ չունի, անձրեւները լցվում են բուժկետի ներս, որի պատերի վերին անկյուններում բորբոս մեծ սնկեր են աճում: Բուժկետը գործում է Տավուշի մարզպետարանի ենթակայության ներքո, հարեւան գյուղի՝Կոթիի բժշկական ամբուլատորիային կից: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք. «Բարեկամավանի բուժկետի շենքի տանիքը ե՞րբ են նորոգելու, կամ բուժկետը ե՞րբ է տեղափոխվելու այլ՝նորմալ տարածք»: Մարզպետարանից պատասխանել են. ««Կոթիի ԳԲԱ» ՊՈԱԿ-ի Բարեկամավանի ԲՄԿ-ի շենքը չունի կադաստրի վկայական, որի պատճառով շենքի եւ տանիքի վերանորոգումը ձգձգվում է: Ներկայումս «Կոթիի ԳԲԱ» ՊՈԱԿ-ի Բարեկամավանի բուժակա-մանկաբարձական կետը (հաստիք՝ 1 բուժքույր) իր գործունեությունը ծավալել է Բարեկամավանի նախկին համայնքապետարանի վերանորոգված եւ ժամանակակից չափանիշներին համապատասխանող 1 սենյակում: ԲՄԿ-ի նախկին շենքի վերանորոգումն ավարտելուց հետո՝բուժքույրն իր գործառույթները կիրականացնի այդ տարածքում»: Բարեկամավանի բուժկետը մշտապես գործել է Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ, մարզպետ Հ. Ղալումյանը նո՞ր իմացավ, որ բուժկետի շենքը կադաստրի վկայական չունի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԿԱՍՊԵՐՍԿԻ»

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՑԱՆՑԱՀԵՆՆԵՐՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԲՈՏԵՐԸ

Երկգործոն նույնականացման մեթոդի տարածվածությունը հանգեցրել է այն կոտրելու կամ շրջանցելու բազմաթիվ եղանակների հայտնվելուն:



«Կասպերսկի» ընկերության տվյալներով՝ որպես երկրորդ գործոն առավել հաճախ օգտագործվում է մեկանգամյա կոդերի՝OTP (One Time Password) միջոցով հաստատումը: Դրանք կարելի է ստանալ տարբեր եղանակներով՝SMS-ի, հեռախոսով ձայնային հաղորդագրության, փոստ ուղարկված նամակի, ծառայության պաշտոնական բոտից մեսենջերում հաղորդագրության կամ հավելվածից հրահանգների ծանուցման տեսքով: Այս կոդերն էլ հենց ցանկանում է ձեռք գցել առցանց խարդախների մեծամանությունը: Օրինակ՝ կոդերը ձեռք գցելու համար նրանք օգտագործում են OTP բոտեր՝ ավտոմատացված ԾԱ, որը կարող է օգտատերերից մեկանգամյա գաղտնաբառեր կորզել՝ սոցիալական ինժեներիայի օգտագործմամբ սխեմաներում:

Քանի որ OTP բոտը նախատեսված է նույնականացման երկրորդ գործոնը գողանալու համար, իմաստ ունի միացնելու այն, եթե չարագործն արդեն ունի զոհի տվյալները՝ առնվազն անձնական օգտահաշվի մուտքանունն ու գաղտնաբառը, ինչպես նաեւ հեռախոսի համարը: Այս տեղեկատվությունը չարագործները կա՛մ գտնում են բաց աղբյուրներում՝ արտահոսած եւ հրապարակված տվյալների բազաներում, կա՛մ գնում են այն դարկնետից, կա՛մ կորզում են ֆիշինգային կայքերում:

Այնուհետեւ ցանցահենը մուտք է գործում ուրիշի օգտահաշիվ եւ ստանում OTP կոդ մուտքագրելու հարցում: Զոհի հեռախոսին գալիս է մեկանգամյա գաղտնաբառով հաղորդագրություն: OTP-բոտը զանգահարում է օգտատիրոջը եւ նախապես պատրաստված սկրիպտի օգնությամբ համոզում է մուտքագրել ստացված կոդը: Զոհը հենց զանգի ընթացքում հեռախոսի ստեղնաշարով հավաքում է կոդը: Այն ուղարկվում է ցանցահենի Telegram-ի բոտ, ով այդպիսով հասանելիություն է ստանում զոհի օգտահաշվին:

Ցանցահենների հաջողությունը կախված է այն բանից, թե որքան համոզիչ կլինի բոտը. մեկանգամյա կոդերի գործողության ժամկետը խիստ սահմանափակ է, եւ գործող կոդը հեռախոսազրույցի ընթացքում ստանալու հնարավորությունը շատ ավելի մեծ է: Չարագործներն ամեն ջանք գործադրում են, որպեսզի զոհը հավատա զանգի օրինականությանը, ուստի որոշ OTP բոտեր հեռախոսահամարը հավաքելուց առաջ զոհերին ուղարկում են SMS հաղորդագրություններ՝ առաջիկա զանգի մասին նախազգուշացմամբ: Դա հոգեբանական նուրբ հնարք է: Դրա նպատակն օգտատիրոջ վստահությունը շահելն է. նախ ինչ-որ բան խոստանալ, ապա կատարել խոստումը:

«Երկգործոն նույնականացումը շրջանցելու համար OTP բոտերի օգտագործումը համեմատաբար նոր երեւույթ է առցանց խարդախության աշխարհում: Սա լուրջ սպառնալիք է ինչպես օգտատերերի, այնպես էլ առցանց ծառայությունների համար, մանավանդ որ որոշ բոտեր զանգի ընթացքում կարողանում են պահանջել ոչ միայն մեկանգամյա գաղտնաբառերը, այլեւ այլ տվյալներ, օրինակ՝ բանկային քարտի համարը եւ գործողության ժամկետը, PIN կոդերը, ծննդյան ամսաթիվը, փաստաթղթերի վավերապայմանները: Բոտերի ֆունկցիոնալությունը տատանվում է մեկ կազմակերպության օգտատերերին ուղղված մեկ սկրիպտից մինչեւ ճկուն կարգավորումներ եւ սկրիպտերի լայն ընտրություն, որոնք թույլ են տալիս այդպիսի բոտերով փոխարինել մի ամբողջ խարդախ զանգերի կենտրոն»,- մեկնաբանում է «Կասպերսկի» ընկերության բովանդակության ավագ վերլուծաբան Օլգա Սվիստունովան:

«Կասպերսկի»-ի փորձագետները խորհուրդ են տալիս անվտանգության հետեւյալ միջոցները.

. տեղադրել Kaspersky Premium՝ ինչպես օգտատիրոջ, այնպես էլ նրա մտերիմների էլեկտրոնային փոստին եւ հեռախոսահամարին կապակցված օգտահաշիվների տվյալների արտահոսքի ավտոմատ ստուգման համար:

Արտահոսքի հայտնաբերման դեպքում պետք է հետեւել հավելվածի խորհուրդներին, թե ինչ պետք է անել այն չեզոքացնելու համար (առնվազն անմիջապես փոխել գաղտնաբառը).

. բոլոր օգտահաշիվների համար ստեղծել հուսալի գաղտնաբառեր Password Manager-ի օգնությամբ:

Ցանցահենները չեն կարողանա օգտագործել OTP բոտերը, եթե չիմանան օգտատիրոջ գաղտնաբառը.

. եթե հաղորդագրություն է գալիս ցանկացած անձնական տվյալի եւ OTP կոդի մուտքագրման հղմամբ, ապա պետք է համոզվել, որ URL հասցեն ճիշտ է: Հասցեի տողում մի քանի նիշ փոխելը, տանելով նման ֆիշինգային կայք, խարդախների սիրված հնարքն է, այնպես որ ավելի լավ է, որ օգտատերը մի քանի վայրկյան ծախսի եւ ստուգի, թե արդյոք օրինական կայքում է, եւ դրանից հետո մուտքագրի մուտանունը, գաղտնաբառը եւ OTP կոդը.

. չհայտնել մեկանգամյա կոդերը երրորդ անձանց եւ չմուտքագրել դրանք հեռախոսի ստեղնաշարով զանգի ընթացքում. բանկի իրական աշխատակիցները, խանութների կամ ծառայությունների ներկայացուցիչները եւ նույնիսկ իրավապահները երբեք չեն փորձի իմանալ մեկանգամյա գաղտնաբառը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՏԵՂՈՒՄՆԱՌԱՏ ՕՐ ԿԼԻՆԻ

ՇՈՒՏՈՎ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆՆ Է

Հայ առաքելական եկեղեցու 5 տաղավար տոներից երրորդը՝ Քրիստոսի պայծառակերպության տոնը, կամ ինչպես առավել հայտնի է ժողովրդի շրջանում՝ Վարդավառը, այս տարի նշվելու է հուլիսի 7-ին:

Պայծառակերպության տոնով հաստատվեց այն ճշմարտությունը, որ Հիսուսը Աստծո Որդին է: Տոնի թելադրանքն է՝ սիրել Աստծուն, լսել Նրա պատվիրանները, եւ իրականացնել Աստծո կամքը:

Տոնի կարեւոր պայմաններից է միմյանց վրա ջուր ցողելը:

Հին ժամանակներում, հատկապես երիտասարդներն առուների եզրին կամ աղբյուրների մոտ հավաքվելով, ժամեր շարունակ ուրախ կատակներով, ճիչ ու աղմուկով ջուր էին ցողում միմյանց վրա:

Հիմա էլ շատերը տոնը նշում են ինչպես տանը, այնպես էլ քաղաքից դուրս՝ հարազատների կամ ընկերների հետ:

Չնայած նրան, որ տոնն ուրախության, երգ ու պարի տոն է, այս տարի կուղեկցվի անձրեւային եւ սառը եղանակային պայմաններում:

Նշենք նաեւ, որ ՇՄՆ «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ը տեղեկացնում է՝ հուլիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության ողջ տարածքում կանխատեսվում է նորմայից բարձր 1 աստիճանով, իսկ տեղումների քանակը նորմայից զգալի ավելի: Սպասվում է ոչ շատ շոգ եւ տեղումառատ հուլիս:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՆՈՐԱԲԱՑ ՀՅՈՒՐԱՆՈՑ

ԲԻԶՆԵՍ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Երեւանի հենց սրտում՝ Տերյան 5 հասցեում, շուրջ երկու ամիս է՝ իր դռներն է բացել «Մարիոթ Ինթըրնեյշընալի» կողմից կառավարվող «Քորթյարդ բայ Մարիոթ» հյուրանոցը: Աշխատանքների մեկնարկի առթիվ հյուրանոցի գլխավոր տնօրեն Թոմաշ Վեսելին հրավիրել է լրատվամիջոցներին շրջայց կատարելու՝ անձամբ ծանոթացնելով լայն հնարավորություններին:

«Հյուրանոցը գործում է մոտ 1 ամիս եւ այն, ինչպես Marriott-ի մյուս հյուրանոցները, մեր Bonvoy-ի մի մասն են, որը արդեն գործում է Հայաստանի հյուրերի համար: Հիշեցնեմ, որ մինչ այժմ Հայաստանում ունեինք 2 հյուրանոց՝ մեկը Ծաղկաձորում, մյուսը Երեւանում, եւ բոլորը այս հավատարմության համակարգի անդամներ են եւ կարող են օգտվել արտոնություններից»:

Ռեստորանին հարակից տարածքից տպավորիչ երեւանյան տեսարանները միախառնվում են համեղ կերակուրների հետ, ինչն էլ իր հերթին տրամադրում է հաջող բիզնես հանդիպումների կամ պարզապես հաճելի ընթրիք ունենալու համար: «Գո սիթ» afterwork-ում կարելի է կոկտեյլներ վայելել, որը հնարավորություն է տալիս անելիքների մասին խորհելու կամ պարզապես հանգստանալու առօրյա տեմպից:

«Քորթյարդ բայ մարիոթի» չափանիշները չեն շրջանցել նաեւ co-working տարածքը, որի տրամադրող միջավայրում կարելի է ավարտին հասցնել կիսատ թողած աշխատանքները: Առկա են ընդարձակ սրահներ ու տարբեր լուծումներ՝ փոքր բիզնես խորհրդակցություններից մինչեւ մեծ միջոցառումներ անցկացնելու համար:

Marriott International-ն ամբողջ աշխարհում հայտնի է որպես իր աշխատակիցներին հաջող կարիերա կառուցելու լայն հնարավորություններ առաջարկող ընկերություն: Կարիերայի ուղին կարող է ներառել տարբեր բաժիններ, երկրներ կամ նույնիսկ մայրցամաքներ:

Courtyard by Marriott-ը հյուրանոցային ապրանքանիշն է այն ճանապարհորդների համար, ովքեր ոգեշնչված են մեծ բարձունքներ նվաճելու ցանկությամբ: Ունենալով ավելի քան 1300 հյուրանոց 60 երկրներում ՝ Courtyard-ը ամեն ինչ անում է իր հյուրերին աջակցելու եւ նրանց կարիքները հոգալու համար՝ ամենուր եւ անկախ նրանց ուղեւորության նպատակից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Մարգարիտա Եգանյանս, 2023 թվականի դեկտեմբերի 27-ին Աէրացիա թաղամասում կորցրել եմ «Երեւանի պետական հենակետային բժշկական քոլեջի»՝ 24.06.2021 թվականին ստացած թիվ AK 173103 դիպլոմս՝ քույրական գործ մասնագիտությամբ: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 77 467 859 հեռախոսահամարով:

Fastex

ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՍՊՈՐՏԻ 103 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ

Օրերս տեղի ունեցած հանդիսավոր միջոցառման ժամանակ Fastex-ն ընդհանուր առմամբ 200 միլիոն ՀՀ դրամին համարժեք 230,000 FTN-ով է պարգեւատրել հայաստանյան սպորտային աշխարհի 103 ներկայացուցչի՝ մարզիկներին, մարզիչներին ու բժշկական անձնակազմին: FTN-ը Բահամուս բլոկչեյնի հիմնական թվային ակտիվն է, որն օգտագործվում է հարթակում իրականացվող գործարքներ կատարելիս:

Դեռ տարվա սկզբին հայտարարված գործակցությունը Fastex-ի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, ինչպես նաեւ «Օլիմպիոնիկ» մարզական բարեգործական հիմնադրամի միջեւ հիմք է հանդիսացել ոչ միայն այս, այլեւ առաջիկա չորս տարվա ընթացքում պարբերական բնույթ կրող միջոցառումների համար: Համատեղ ջանքերով կողմերը նպատակ ունեն խթանելու Հայաստանի Հանրապետությունում սպորտի զարգացումը, բարձրացնելու մարզիկների մրցունակությունը, բարելավելու վերջիններիս կենսական պայմանները, ինչպես նաեւ խթանելու ներպետական ու միջազգային սպորտի ասպարեզում գրանցվող հաղթանակները: ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն իր ելույթում անդրադարձել է այս կարեւոր համագործակցությանը.

«Fastex-ի հետ համագործակցության շրջանակում կտրամադրվի հայկական սպորտի պատմության համար աննախադեպ չափի գումար: Առաջիկա տարիներին մենք կունենանք այդ օժանդակությունը: Մեր պայմանավորվածության համաձայն՝ ամբողջ գումարի 70%-ը հատկացվելու է մարզիկների, հավաքականների գլխավոր մարզիչների, երկրորդ եւ անձնական մարզիչների, նաեւ բժիշկների պարգեւատրմանը: Սա Fastex-ի նախաձեռնած պարգեւատրությունն է՝ պետական չափանիշերով, պետության կողմից տրված պարգեւներին համարժեք: Հուսով եմ, որ սա լրացուցիչ խթան կհանդիսանա մեր մարզիկների համար՝ նոր հաջողություններ եւ հաղթանակներ գրանցելու ճանապարհին: Տրամադրված գումարի մյուս մասը՝ 30%-ը, ուղղվելու է սպորտային տարբեր միջոցառումների կազմակերպմանը: Առաջիկա մեկ տարվա ընթացքում Երեւանում կայանալու է բասկետբոլի մինչեւ 20 տարեկանների Եվրոպայի Բ խմբի առաջնությունը, որի անցկացման իրավունքն արդեն հաստատված է: Միջոցառումը տեղի կունենա 2025թ. Երեւանում: Բացի դրանից կիրականացվեն վոլեյբոլի 16 տարեկանների Եվրոպայի առաջնությունը, կարատեի Եվրոպայի առաջնությունը, սպորտային պարերի աշխարհի գավաթի խաղարկությունը, ինպես նաեւ հոկեյի Դ դիվիզիոնի աշխարհի առաջնությունը»:

«Փարիզում կայանալիք Օլիմպիական խաղերին ընդառաջ մենք առանձնահատուկ կերպով ենք ուզում կարեւորել եւ գնահատել ոչ միայն անվանի հայ մարզիկների, այլեւ իրենց հաջողությանը նպաստող մարզիչների ու բժիշկների աշխատանքը: Այսպիսի միջոցառումները տեղի են ունենալու առաջիկա չորս տարիների ընթացքում, տարեկան երկու անգամ», - նշել է Fastex-ի համահիմնադիր Վիգեն Բադալյանը:

«Ուզում եմ շնորհավորել մեր մարզիկներին հաղթանակների կապակցությամբ: Շատ կարեւոր է, որ բարձր եք պահում մեր դրոշը միջազգային մրցումներում:

«Ֆաստեքսը» մշտապես սատարում է հայկական սպորտի զարգացմանը: Մինչեւ 2030թ. Fastex-ը 5 մլն FTN կտրամադրի հայկական սպորտի աջակցմանը: Այսօր այս մեծ ճանապարհի առաջին քայլերն ենք անում: Շնորհակալ ենք մեր մարզիկներն, բարձր ենք գնահատում նրանց կատարած աշխատանքը», - ասել է «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի համահիմնադիր Վահագն Բադալյանը:

Հիշեցնենք, որ համաձայն դեռ տարվա սկզբին ստորագրված պայմանավորվածության՝ Fastex-ն աջակցություն կցուցաբերի օլիմպիական, պարաօլիմպիկ, սուրդօլիմպիկ խաղերում, օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձեւերի, ինչպես նաեւ օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտ, միջազգային շաշկի, ուշու եւ շախմատ մարզաձեւերի միջազգային մրցաշարերում 1-3-րդ տեղերը գրաված մարզիկներին եւ նրանց մարզիչներին:

Ընդհանուր շրջանառությունից թվային գործարքների ռեեստերում (բլոկչեյնում) առանձնացվել եւ մինչեւ 2030 թվականն ապահով սառեցվել են 5 միլիոն $FTN-ները: Վերջիններս աստիճանաբար կբաշխվեն՝ համաձայն սմարթ պայմանագրերի միջոցով նախապես սահմանված պայմանների: Այս մոտեցումը խրախուսում է միջոցների արդար եւ թափանցիկ տեղաբաշխումը շահառուների թվային դրամապանակներին:

ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄ

«ԴԵՖԱՆՍՈՒՄ» ԱՅՍՕՐ ԱՅԼ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է

«Ժողովուրդ» օրաթերթը կրկին «Դեֆանս Հաուզինգ» թաղամասում է՝ հետեւելով այնտեղ կատարվող աշխատանքներին:

Մեր նախորդ այցից վեց ամիս անց կրկին այցելեցինք 140 հա տարածքով Defanse Housing թաղամասի շինհրապարակ:

Տպավորիչ փոփոխություններ էին ինչպես բնակելի շենքերի շինարարության մեջ, այնպես էլ ներթաղամասային ճանապարհային ցանցի ձեւավորման եւ կենտրոնական անտառ-պուրակի կայացման առումով:

Ինչպես եւ կառուցապատողը խոստացել էր, աշխատանքներն ընթանում են ըստ շինարարական գրաֆիկի: Կան շենքեր, որտեղ արդեն ավարտված են մոնոլիտային աշխատանքները, իսկ շենքերի զգալի հատվածում ավարտական հարկերն են կառուցվում: Defanse Housing-ում շենքերի շինարարության ընթացքում ամսական աշխատանքի ծավալը կազմում է 35.000 քմ եւ ավելի բետոնի շինարարական մակերես, որը նույնն է, թե Defanse Housing-ում մեկ ամսվա ընթացքում կառուցվում է 3 բարձրահարկ շենք:

Defanse Housing թաղամասի ներթաղամասային ճանապարհային ցանցը կազմելու է 100.000 քմ, եւ թաղամասն ունենալու է արտաքին ճանաարհային ցանցին կապող հինգ հանգույց՝ ոչ պակաս, քան 15 մետր լայնությամբ, որոնցից մեկն արդեն պատրաստ է:

Ստեղծվում են նոր կոմունիկացիոն ենթակառուցվածքներ: Defanse Housing թաղամասն ապահովվելու է գազով: Թաղամասին կից 10000 խմ ծավալով ջրամբարի առկայությունը հնարավորություն է տալու ունենալու Ապարանի ջուր՝ առանց ջրանջատումների: Կառուցվելու է 250 մեգավատի հզոր ենթակայան, որի դեպքում տեխնիկապես անհնար են լինելու էլեկտրաէներգիայի ընդհատումները: Թաղամասն իր դիրքով եւ հնարավորությամբ առանձին կոյուղատար խողովակով միանալու է Աէրացիայի գլխավոր կոյուղատար համակարգին:

Շուրջ 24 հեկտար հողատարածքի վրա կենտրոնական անտառ-պուրակի հիմնումը գրեթե ավարտված է: Արդեն կատարվել են 4000-ից ավելի ծառերի տնկման աշխատանքներ: Կենտրոնական անտառ-պուրակում կառուցվում են 2500 մետրից ավելի երկարությամբ 13.5 մետր լայնությամբ հեծանվուղիներ, վազքուղիներ եւ մինչեւ 6.5 մետր լայնությամբ լուսավորված ճեմուղիներ:

Կենտրոնական անտառ-պուրակում մոնտաժվել են 5 շատրվանային կոմպլեքսները, որոնք կգործարկվեն մինչեւ 2024 թվականի օգոստոս: Ինչպես նաեւ թաղամասում կառուցվում է Հայաստանի ամենամեծ գունաձայնային, լազերային շատրվանային կոմպլեքսը:

Ովքեր ցանկանում են գնել բնակարան Երեւանում, ունեն հնարավորություն լինել Defanse Housing-ի շինհրապարակում, կառուցապատողը շարունակում է շաբաթական երկու անգամ կազմակերպել գնորդների համար շրջայց նորակառույց թաղամասի տարածք. այնտեղ էլ շփվեցինք գնորդների հետ, ովքեր պատմեցին իրենց տպավորություններից:

Defanse Housing-ը՝ որպես առաջատար կառուցապատողը Հայաստանում, շարունակում է հաղորդել կառուցապատման կուլտուրայի լավագույն որակ, ինչին կարող է ականատես լինել յուրաքանչյուր անձ՝ այցելելով Defanse Housing թաղամասի շինհրապարակ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

SUMMEET

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

SUMMEET Հայաստանում ժամանակակից պարի միջազգային ամառային փառատոնը հասեց եզրագիծը:

Պարի տոնն այս տարի անցկացվեց հունիսի 24-29-ը: Այն անցկացվեց Երեւանում եւ Աշտարակում: 4-րդ SUMMEET-ին իրենց նախագծերն են ներկայացրել պարային ընկերություններ Ֆրանսիայից, Շվեյցարիայից, Ռուսաստանից, Ղազախստանից:

«SUMMEET միջազգային փառատոնի առաքելությունը տարեցտարի մի այնպիսի հարթակի վերածվելն է, որ մի կողմից համաշխարհային ասպարեզ դուրս կբերի հայաստանյան ժամանակակից պարը, իսկ մյուս կողմից հայ արտիստներին եւ պարուսույցներին կծանոթացնի համաշխարհային ճանաչում ունեցող հեղինակներին եւ պարային ընկերություններին: Հենց այդ պատճառով էլ յուրաքանչյուր տարի SUMMEET-ը Հայաստան է բերում բացառիկ նախագծեր: Ուրախ ենք, որ այս տարի եւս, հավատարիմ լինելով մեր առաքելությանը, լավագույնս իրականացրեցինք փառատոնը»,- նշում են փառատոնի կազմակերպիչները:

Փառատոնի մեկնարկը տրվեց Աշտարակում՝ Դրամատիկական թատրոնի բեմում: Այնուհետեւ մի շարք ցուցադրություններ տեղի ունեցան երեւանյան հարթակներում:

Փառատոնային կարեւոր նախագծերից էր Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի բեմում ներկայացված Balmanukyan Dance Project-ի «Կոմիտասի երգերը. Revival» նախագիծը (Հայաստան/Ռուսաստան):

Կայացավ նաեւ փառատոնային կարեւոր նախաձեռնություններից մեկը՝ փարիզյան ACTS պարային ակադեմիա ընդունվելու քասթինգը, որին կարող էին մասնակցել հայ պարողները: Իսկ փառատոնի փակմանը հանրությունը դիտեց Cosmogony առցանց ներկայացումը (Շվեյցարիա): Այն առանձնահատուկ էր նրանով, որ ներկայացվեց Ժնեւում, իսկ մեզ մոտ ժամանակակից տեխնոլոգիաներով ցուցադրվեց տեսաէկրանին՝ այլ իրականությունում:

Փառատոնի մարգարիտն էր Armenian Showcase-ը՝ հայկական ցուցադրությունը, որն ի մի էր բերում հայ ժամանակակից պարուսույցների լավագույն աշխատանքները, եւ որի շրջանակում ներկայացվեցին հետաքրքիր բեմադրություններ:

Մասնավորապես, Երեւանի թատրոնի եւ կինոյի բեմում ցուցադրվեցին Վանեսա Հակոբյանի «Օծանելիքը»՝ հիմնված է Պատրիկ Զյուսքինդի համանուն վեպի վրա, Նելլի Մարտիրոսյանի «Սիզիփոսը»՝ հիմնված Ալբեր Կամյուի «Սիզիփոսի առասպելը» էսսեի վրա, Սուսաննա Վարդանյանի «Հուդան», Արշավիր Մուրադյանի «Նոն-կոնֆորմիզմը»՝ մտերիմ ընկերներ ու անհաշտ մրցակիցներ Մոցարտի եւ Սալիերիի մասին եւ Անահիտ Թորոսյանի «Կանչիր ինձ, եւ ես կգամ» բեմադրությունները:

Ստանիսլավսկու անվան ռուսական դրամայի թատրոնի փոքր դահլիճում ներկայացվեցին հայ երիտասարդ հեղինակների երկու պարային պերֆորմանսներ, մասնավորապես՝ Թինա Հայրապետյանի «Սիգնալը» եւ Մարգարիտա Սարգսյանի «Սկիզբը»:

Փոքր թատրոնի հյուրընկալ բեմում հանրությունը դիտեց Սոֆի Քէօշկէրեանի՝ «Հեռանկար, իմպուլս, աբսուրդ», Էդիտա Հովհաննիսյանի «Ջուգահեռ իրականություն» եւ Միլենա Այվազյանի «Մեղքը» բեմադրությունները:

Նշենք նաեւ, որ Երեւանի պարարվեստի պետական քոլեջում անցկացվեցին փառատոնային վարպետության դասերը, որոնք եւս մեծ հետաքրքրություն առաջացրին, մեծաթիվ հայտեր ստացվեցին: Վարպետաց դասերն անցկացրին հայտնի պարուսույցներ Ֆրանսիայից, Ղազախստանից եւ Ռուսաստանից: Անցկացվեցին նաեւ մի շարք հետաքրքրական դասախոսություններ:

Փառատոնի կազմակերպիչներն են «Սարեր» մշակութային հասարակական կազմակերպությունը, Open Look միջազգային փառատոնի հիմնադիր Վադիմ Կասպարովը, օպերային երգիչ Հայկ Վարդանյանը եւ Balmanukyan Dance Project պարային ընկերությունը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲՈՒՐԿԻՆԱ-ՖԱՍՈՅԻ ՖՈՒՏԲՈԼԻՍՏԸ՝ «ՆՈԱՅՈՒՄ»

Հայաստանի փոխչեմպիոն «Նոային» է միացել կիսապաշտպան Գուստավո Սանգարեն: Ֆուտբոլիստը 2017 թվականից հանդես է եկել ֆրանսիական տարբեր թիմերում: 2021 թվականից Սանգարեն հանդես էր գալիս «Քյովիի Ռուան Մետրոպոլում», որի կազմում Լիգա-2-ում անցկացրել է 92 խաղ ու դարձել 5 գոլի հեղինակ:

27-ամյա ֆուտբոլիստը Բուրկինա-Ֆասոյի ազգային հավաքականի անդամ է: Ընտրանու կազմում անցկացրել է 31 խաղ ու դարձել 2 գոլի հեղինակ:

«Հպարտ եմ միանալ այս անհավանական ակումբին, որն ամեն ինչ արել է ինձ այստեղ բերելու համար: Ես ցանկանում եմ անել առավելագույնը՝ մեր ընդհանուր նպատակներին հասնելու համար: Անհամբեր սպասում եմ՝ բոլորիդ հետ միասին սկսելու այս նոր արկածը»,- ասել է թիմի նորեկը:

ՄԿՐՏՉՅԱՆԸ՝ ՓԱՐԻԶԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Փարիզի ամառային Օլիմպիական խաղերին Հայաստանը կունենա մեկ աթլետ մասնակից:

Խաղերի մասնակցության իրավունք է ստացել վազորդ Երվանդ Մկրտչյանը:

Մինչ այս Փարիզ-2024-ի ուղեգիր է ապահովել 14 մարզիկ՝ հրաձիգ Էլմիրա Կարապետյանը, մարմնամարզիկներ Արթուր Դավթյանը (հենացատկ), Վահագն Դավթյանը (օղակներ), ըմբիշներ Սլավիկ Գալստյանը (հունահռոմեական ոճ, 67 կգ), Մալխաս Ամոյանը (հունահռոմեական ոճ, 77 կգ), Արթուր Ալեքսանյանը (հունահռոմեական ոճ, 97 կգ), Արսեն Հարությունյանը (ազատ ոճ, 57 կգ), Վազգեն Թեւանյանը (ազատ ոճ, 65 կգ), ծանրորդներ Անդրանիկ Կարապետյանը (89 կգ), Գարիկ Կարապետյանը (102 կգ), Վարազդատ Լալայանը (+102 կգ), բռնցքամարտիկ Դավիթ Չալոյանը (+92 կգ), լողորդներ Արթուր Բարսեղյանը եւ Վարսենիկ Մանուչարյանը:

ՊԱՏՐԱՍՏ է ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ ԴԱՌՆԱԼՈՒՆ

Գերմանիայի հավաքականի դարպասապահ Մանուել Նոյերը խոսել է Եվրո-2024-ում հաղթելու իր թիմի պատրաստակամության մասին, ինչպես նաեւ կիսվել է իր մտքերով մրցաշարի 1/4 եզրափակիչ խաղից, որում գերմանացիները կհանդիպեն Իսպանիայի հավաքականի հետ:

«Մենք վաղուց ենք պատրաստ՝ դառնալու Եվրոպայի չեմպիոն: Իհարկե, ես շատ ուրախ կլինեի, եթե այս գլուխկոտրուկի վերջին կտորը դրվեր իր տեղը: Մենք ամեն ինչ կանենք, որպեսզի դա տեղի ունենա:

Իսպանիայի հավաքականը լավ է գործում, վերահսկում է գնդակը եւ ունի ամենաուժեղ հարձակվողները: Մեզ համար հատկապես կարեւոր կլինի նրանց խաղացողներին ազատ տարածությունից զրկելն ու դարպասին հարվածները կասեցնելը: Մեր թիմում բոլորս անհամբերությամբ ենք սպասում այս ամռանը եւ շարունակում ենք աշխատել հաջողության բերկրանքը վայելելու համար»,- ասել է Նոյերը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԱՄՓՈՓՎԵԼ է «ԿՐԹԻՐ՝ ԿՐԹՈՂԻՆ» ԾՐԱԳԻՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ եւ «Տերյան մշակութային կենտրոն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ իրականացված «Կրթիր՝կրթողին» խորագրով ծրագիրն ամփոփվել է «Տերյան» մշակութային կենտրոնում կազմակերպված ցուցադրությամբ: Այն «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ծրագրեր» անվանակարգով դրամաշնորհային մրցույթի արդյունքում արժանացել էր հավանության:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 30 արցախցիներ մասնակցել են հայկական ավանդական ձեռարվեստի եռամսյա դասընթացներին՝ տիրապետելով թաղիքագործության, ասեղնագործության, կավագործության գիտելիքներին եւ հմտություններին: Արդյունքում՝ մասնակիցները սովորել են ասեղնագործության տարբեր տեսակներ, թաղիքագործության եւ կավագործության տեխնիկայի հմտություններ՝ պատրաստելով դեկորատիվ-կիրառական արվեստի տարբեր նմուշներ՝ հագուստի աքսեսուարներ, զարդեր, խեցեղեն իրեր, հուշանվերներ եւ այլն:

Ծրագրի նպատակն էր նպաստել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց նոր մասնագիտությունների ձեռքբերմանը, սեփական արտադրանք ունենալու հնարավորության, համագործակցային կապեր հաստատելու հնարավորությունների ընդլայնմանը, ինչպես նաեւ ստեղծագործական, կրթական, աշխատանքային պայմանների եւ եկամուտ ստանալու հնարավորությունների ստեղծմանը: Նրանք էլ իրենց հերթին շարունակական աջակցություն կցուցաբերեն մյուս արցախցիներին:

ԿԱՄԻԼ ԹՈՄԱՆ ԵԼՈՒՅԹ ԿՈՒՆԵՆԱ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՀԵՏ

Հուլիսի 4-ին՝ ժամը 19:30-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա թավջութակահար Կամիլ Թոմայի եւ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգը՝ դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ:

Ծրագրում կհնչեն չեխ կոմպոզիտոր Անտոնին Դվորժակի Թավջութակի կոնցերտը եւ Շառլ Ազնավուրի երգերը՝ փոխադրված թավջութակի եւ նվագախմբի համար: Մասնավորապես, ունկնդիրը հնարավորություն կունենա վայելելու Ազնավուրի «Էսպերանզա», «Տար ինձ քեզ հետ», «Նրանք ընկան», «Ավե Մարիա», «Լա Բոհեմ», «Նա» եւ այլ սիրված ստեղծագործությունները:

● *Հուլիսի 7-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Վերջին ծաղրածուն» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝2000-4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ընդհանուր տիպի տուն-ինտերնատ ընդունվելու համար սոցիալական աջակցության տարածքային մարմին ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի քաղաքացին:

Սերինե Հայրապետյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի N1112-Ն որոշման՝ փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային մարմին պետք է ներկայացնել՝

-անձնագիր կամ նույնականացման քարտ,

-նույնականացման քարտ չունենալու դեպքում՝ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տեղեկանքի տեսքով հատկացված հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սոցիալական քարտ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանք,

-խնամքի տրամադրում հայցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ հանդիսանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ (կացության քարտ), իսկ փախստականի կարգավիճակ ունենալու դեպքում՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ,

-հաշմանդամության վերաբերյալ տեղեկանք՝ տրված բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող մարմնի կողմից, եթե անձը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է որպես հաշմանդամություն ունեցող անձ,

-անձի բժշկական քարտը՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի ու առողջապահության նախարարի համատեղ հրամանով հաստատված ձեւին համապատասխան, կամ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112 -Ն որոշման N 3 հավելվածի հիվանդությունների ցանկում ներկայացված հիվանդություններով հիվանդ չլինելու հանգամանքը հիմնավորող փաստաթուղթ (փաստաթղթեր)՝ տրված համապատասխան բժշկական հաստատության (հաստատությունների) կողմից:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաճախորդին խնամք տրամադրվում է՝ սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի որոշման հիման վրա:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Երրորդ երկրներից ՀՀ տարածք ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար ներմուծման դեպքում ո՞րն է համարվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն:

Տրդատ Հունանյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ծխախոտի արտադրանքի ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ երրորդ երկրներից ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի եւ գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Օրերս մեկնարկել են Լոռի Բերդ ամրոցի եկեղեցու (հասարակական կառույցի) վերականգնման աշխատանքները, որոնք իրականացվում են Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի կազմած վերականգնման նախագծով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 12 +25 + 29
Կոտայքի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 19+ 21 +30 + 33
Գեղարքունիք	+ 7+ 11 +24 + 28
Լոռի	+ 9 + 14 +25 + 28
Տավուշ	+ 14+ 19 +29 + 33
Արագածոտնի լեռներ	+ 7 + 9 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20 +29 + 33

Արարատ	+ 19 + 21 +34 + 36
Արմավիր	+ 18+ 20 +34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 19 +33 + 35
Սյունիքի հովիտներ	+ 18 + 21 +31 + 34
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16 +25 + 28
ԼՂՀ	+ 12 + 15 +24 + 26
Երեւան	+ 22 + 24 + 32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*